

Մ. ՇԱԹԻՐՅԱՆԻ «ԱՐԾԱԹԵ ԴԱՐ» ՊԱՏՄԱՎԵՊԻ
ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ա. Գ.

Ուղիղ 30 տարի է անցել Միքայել Շաթիրյանի «Արծաթե դար» պատմավեպի հրապարակումից, և տարիներ անց, նորից վերընթերցելով այդ հիանալի գիրքը, հասկանում ես, որ այն ավելի քան արդիական է: Ռուսական պատմավիպասանության նշանավոր դեմքերից մեկը՝ Վասիլի Յանը, որը Չինգիզ խանին ու նրա հաջորդներին վերաբերող պատմական եռագրության համար օգտագործել է նաև Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը»¹, հետևյալ պահանջն է դնում պատմավիպասանի առաջ. «Պատմավեպը, բացի նրանից, որ պետք է պատմականորեն ճշգրիտ ու հետաքրքրաշարժ գրված լինի, նախ և առաջ պետք է լինի հերոսականության, ճշմարտության և առաքինության ուսուցիչ»²:

Մ. Շաթիրյանը «Արծաթե դար» վեպը գրելիս օգտագործել է համաշխարհային պատմավեպի, ինչպես նաև հայ պատմավեպի լավագույն ավանդները: Նախ գիտականորեն խորացել է հայ ժողովրդի պատմության այն ժամանակահատվածի մեջ, որը սկսվում է Բագրատունիների թագավորության անկումով և հասնում մինչև Լևոն Մեծագործի ջանքերով Կիլիկյան հայկական թագավորության հաստատման ժամանակաշրջանը: Վեպի փաստագրական հետազոտումը պարզում է, որ գրողը ծանոթ է եղել Կիլիկյան շրջանի հայ մատենագրության դրսևորումներին, Գրիգոր Պահլավունի, Ներսես Շնորհալի, Գրիգոր Տղա, Գրիգոր Ե Քարավեժ, Գրիգոր Զ Ապիրատ կաթողիկոսների կյանքին ու գործունեությանը, XII դարի խաչակիրների գործունեությանը, Մեծ Հայքի և Կիլիկյան Հայաստանի հոգևոր ու աշխարհիկ տերերի փոխհարաբերություններին, միաբարակա՛ն շարժման հետ կապված՝ հայ հոգևոր հայրերի մաքառումներին և դեռ XII դարում շարունակվող ադանդավորական շարժումներին, որոնցից մեկն էլ արևորդիների հերձվածն էր:

Վեպը շարադրված է այն ճշգրիտ մոտեցմամբ, ըստ որի, հայ ժողովրդի առաջադեմ ուժերը Կիլիկյան Հայաստանի թագավորությունը հիմք են համարել Մեծ Հայքի տարածքում ազգային պետականությունը վերականգնելու համար:

Վեպում Մեծ Հայքը դիտարկված է իր պատմական ամբողջական տարածքով՝ Արցախ, Մոկս, Սասուն, Վանա լճի շրջակա տարածքներ, մինչև Կիլիկիա: Այդ գաղափարի կրողը Սմբատն է՝ վեպի առանցքային կերպարը, որը Արցախից տեղափոխվում է Կիլիկիա և չունենալով ազնվական ծա-

¹ Ян В. Собрание сочинений в четырех томах, т. 2, М., 1989, с. 237.

² Ян В. Собрание сочинений в четырех томах, т. 1, М., 1989, с. 5.

գում՝ իր քաջության ու խելքի շնորհիվ Կիլիկիայում բերդեր է գրավում՝ դառնալով դրանց տերը և ստանալով ազնվական տիտղոս:

«Արծաթե դար» պատմավեպը բազմապլան է և բազմակերպար:

Գրողին ծանոթ է Արիստակես Լաստիվերցու պատմությունից տիեզերահռչակ Անի քաղաքի կործանման պատմությունը³:

Մ. Շաթիրյանը վեպում շարունակ շեշտում է հայի ազատատենչությունը: Այնժամ, երբ բազարկանը Մմբատին ասում է, թե գերի հայերը հրաժարվում են թշնամու համար աշխատել, վերջինս հպարտորեն պատասխանում է. «...ես միայն հպարտ եմ, որովհետև հայը իրոք ծնված չէ ստրուկ լինելու համար... Նա ազատ լեռների ազատ զավակ է, զինվոր և գերության մեջ չի համակերպվում ուրիշի կամքի ու կարգի հետ...»⁴:

Անիի կործանումը և Բագրատունիների թագավորության անկումը պատճառ դարձան հայ նախարարների և նրանց հպատակ ռազմիկների զանգվածային արտագաղթին դեպի տարբեր երկրներ՝ Եգիպտոս, Վիրք, Փոքր Հայք, Կապադովկիա, Ասորիք և հատկապես Կիլիկիա: Այս երևույթը տեսանելիորեն առկա է վեպում: Ինչպես իր ողբում է բացատրում այդ ժամանակների ականատես պատմիչ Ա. Լաստիվերցին, պատճառը հետևյալն էր.

**Օրավուր մեր դեմ բոլոր կողմերից
Հառնեցին անդուլ նոր պատերազմներ,
Արևելքից սուր, արևմուտքից մահ,
Հյուսիսից սպանդ և հարավից հուր,
Ուրախությունը երկրից վերացավ.
Ամենուր լռեց ձայնը քնարի,
Լռեց թմբուկի բոմբյունը զվարթ,
Բարձրացան ողբի աղաղակները⁵:**

«Արծաթե դար» վեպը ներկայացնում է ոչ միայն հայ պետականության, այլև մշակութային ու գիտական կյանքի վերելքը՝ հանձինս այնպիսի մտավորականների, ինչպիսիք էին Ներսես Շնորհալին և Մխիթար Գոշը:

Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հանդես գալը մասնագետները կապում են Հայաստանի ազատագրական մղումների հետ. «ԺԲ դարի վերջին քառորդից սկսած հայ ժողովուրդը թևակոխում է ազգային պետականության վերականգնման մի նոր շրջան, որն անխզելիորեն կապված է Հայաստանի հարավ-արևմուտքում Ռուբինյան, հյուսիս-արևելքում՝ Ջաքարյան իշխանական տների հետ»⁶: Պետականության վերահաստատման գործում իր դերը պետք է կատարեր քաղաքացիական օրենսգիրքը, որը և իրականացրեց Մխիթար Գոշը: «Դատաստանագիրքը» այնքան ընդունված էր տարածաշրջանում, որ երբ 1703-1709 թթ. վրաց արքայազն

³ Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Ե., 1971, էջ 98-101:

⁴ Շաթիրյան Մ., Արծաթե դար, Ե., 1983, էջ 51: Այսուհետև վեպից արված մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

⁵ Արիստակես Լաստիվերցի, նշվ. աշխ., էջ 2:

⁶ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի: Աշխատասիրությամբ՝ Խոսրով Թորոսյանի, Ե., 1975, էջ 2:

Վախթանգը կազմեց իր «Հավաք օրինացը», օրենսգրքում բառացի որոշ օրենքներ քաղեց Գոշի «Դատաստանագրքից»: Այդ հատվածները մատնացույց է անում ֆրանսիացի հայագետ և վրացագետ Մարի Բրոսսեն. «Ինչպես հայտնի է... Էջմիածնից Վախթանգին ուղարկված՝ հայ թագավորների օրենքները Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն» էր⁷:

Մ. Շաթիրյանն իր վեպում ճշգրտորեն ներկայացնում է Մ. Գոշի ջանքերը հայ պետականության վերականգնման երազանքն իրականություն դարձնելու գործում. «Հասկանո՞ւմ ես, ես շարունակ մտածում եմ, որ մենք հիմա մոտենում ենք մեր թագավորության վերականգնմանը, - հուզված ասաց Մխիթարը: - Ես գիտեմ, որ կլինեն մարդիկ, ովքեր կծիծաղեն իմ այս երազանքի վրա...» (էջ 76):

«Արծաթե դարի» լուսավոր կերպարներից է Ներսես Շնորհալին, որն իր բազմագիտակությամբ ու դիվանագիտական հմտությամբ փորձում էր լուծել Հայաստանի քաղաքական խնդիրները՝ ծավալելով նաև լուսավորական շարժում: Շնորհալու հայրենասիրությունը գրողը մատնացույց է անում «Ողբ Եդեսիոյ» քերթվածից բերված Հայաստանի թագավորության անկումը պատկերող հատվածներով և «Թուղթ ընդհանրականում» հոգևորական դասի խիստ քննադատությամբ:

Վեպում շոշափված խնդիրներից է նաև անդրադարձը աղանդավորական շարժումներին: Գլխավոր հերոսներից Սմբատը թոնդրակյան գաղափարախոսության համախոհներից է, սակայն վճռական պահերին պարզապես հայրենասեր հայ է, որի համար առաջնայինը հայրենիքի ազատությունն ու բարօրությունն են:

Ինչպես վկայում է Միքայել Չամչյանը, Ներսես Շնորհալին արևորդիների մասին գրված իր թղթով հրահանգում է վերջիններին մկրտել և վերադարձնել Հայ առաքելական եկեղեցու գիրկը. «Եւ այնպէս մկրտեալ նոցա և ուսեալ զբանս հաւատոյ՝ հաստատեցան ի ճշմարիտ աստուածագիտութեան և առ սակաւ սակաւ իսպառ անհետ եղև այն մոլութիւն արևորդաց»⁸:

Վեպում Մ. Շաթիրյանի կողմից հայ իրականության մեջ տեղ գտած աղանդավորական շարժումներին անդրադարձը պատահական չէ: Այդ շարժումներից պավլիկյաններինը դեռ կար Տարոնում, և վերջիններին գաղափարախոսությունն ամփոփված էր «Բանալի ճշմարտութեան» ձեռագրում, որը հրատարակել է անգլիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Կոնիքերը 1893-ին՝ Գալուստ Տեր-Մկրտչյանից ստանալով ձեռագրի ընդօրինակությունը⁹:

«Արծաթե դար» վեպի երկրորդ գիրքն ամբողջությամբ նվիրված է Լևոն Մեծագործի ջանքերին՝ Կիլիկիայում անկախ պետականություն ստեղծելու նպատակը վերջնական հաղթանակի հասցնելու համար:

⁷ Brosset M. Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, exécuté en 1847-1848..., SPb., 1849-1850, p. 79.

⁸ Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, հ. Գ, Ե., 1984, էջ 87:

⁹ Skéu The Key of Truth, Oxford, 1898:

Շաթիրյանը պատմական ճշգրտությամբ ներկայացնում է, թե ինչ արգելքներ էին կանգնած այդ անհատի ճանապարհին. նրան շարունակ խանգարում էին թուրքերը, բյուզանդացիները, Հոմը, եվրոպական խաչակիրները, հայ իշխանների ներքին տարաձայնությունները, նաև հոգևոր դասի տարակարծությունները՝ պետությանը ենթարկվելու խնդիրներում: Միարարական շարժումն իր ավերիչ գործունեությունն էր ծավալում, և փտանգ էր առաջանում Մեծ Հայքի ու Կիլիկիայի հոգևորականության միջև: Մեծ Հայքի հոգևորականները պնդում էին, թե հայ եկեղեցին չպետք է միանա ոչ հունականին և ոչ էլ կաթոլիկ Հռոմին, և նրանք իրավացի էին: Ունիթորության մերժման խնդիրներում Մեծ Հայքի հոգևորականներին սատարում էին Ներսես Շնորհալի և Գրիգոր Տղա կաթողիկոսները: Սակայն Գրիգոր Տղայի մահվանից հետո, երբ Լևոն Երկրորդի աջակցությամբ կաթողիկոս է ընտրվում Գրիգոր Ե Քարավեժը, վերջինս չի համաձայնվում արքայի՝ կաթողիկոսի գործունեությունը սահմանափակող որոշումներին, և Լևոնը նրան բանտարկել է տալիս: Ընդամենը 22 տարեկան կաթողիկոսին նրա հակառակորդները դավադրաբար նետում են ժայռի վրա. այստեղից էլ՝ Քարավեժ մականունը: Այս փաստը դժգոհություն է առաջացրել Մեծ Հայքի հոգևորականության մեջ:

Խաչակիրների շրջանում Կիլիկիայի ազնվականները և թագավորական ընտանիքը ամուսնական կապեր էին հաստատում եվրոպական թագավորական ընտանիքների անդամների հետ: Սա հին ժամանակներից եկող քաղաքական, դիվանագիտական նպատակներ ունեցող իրողություն էր: Քանի որ Կիլիկիայի հայ տերերը ֆրանկների հետ լայն շփումների մեջ էին, ապա յուրացնում էին ֆրանսերենը, և կիլիկյան հայերենի մեջ հայտնվում են բազմաթիվ ֆրանսերեն բառեր: Ֆրանսերենի ազդեցությամբ սպարապետը կոչվում էր գունդստաբլ, զարմիկը՝ կուզեն, ասպետը՝ շեվայե, ազնվականը՝ բարոն և այլն: Այս և նման բառերի շարունակ հանդիպում ենք վեպի շարադրանքում:

Վեպում պատկերված են ոչ միայն մահմեդականների վայրագությունները հայերի նկատմամբ, այլև խաչակիրների, որոնց դավադրությամբ Ուռհայում սպանվում է նրանց հավատարիմ Թորոս հայ իշխանը:

Մ. Շաթիրյանը փաստերով ներկայացնում է «արծաթե դարի» հայ մատենագրության բարձր մակարդակը: Վեպում բերվում են Ներսես Շնորհալու՝ գինուն, ցորեն հացին և գրքին նվիրված հանելուկները: Գիրքը Շնորհալին փոխանունությամբ պատկերել է հետևյալ ձևով.

Արդ է անթև և անփետուր,

Քան զծիծառն երթայ ի սուր,

յերկրէ յերկիր շրջի թափուր,

Դառնայ ու գայ բերէ շատ հիր... (էջ 221):

Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին հիացական գնահատական է տվել Ներսես Շնորհալու՝ հայ գրականության զարգացման մեջ կատարած դերին. «Կարելի է ստուգապես ասել, որ հայոց կաթողիկոս Ներսես

Շնորհալին, ծնված Ֆրանսուա Ասիզից երեք քառորդ դար առաջ, դարձավ առաջնորդը այնպիսի բարեշրջման, որի նմանը մեզ հայտնի է գաղիականություն անունով: ...Նա դիմում էր ժողովրդին՝ չխորշելով գրել նրանց համար խոսակցական լեզվով»¹⁰: Այս երևույթը նրբորեն նկատված է Մ. Շաթիրյանի պատմավեպում, որի հիմքի վրա էլ հասկանում ես, թե ինչու նկարա-գրված ժամանակահատվածը կոչվել է «արծաթե դար»:

Բաֆֆին հայ գրականությանը նվիրեց իր հիանալի երեք պատմավեպերը՝ «Սամվել», «Դավիթ Բեկ», «Պարույր Հայկազն»: Նա «Սամվելի» առաջաբանում իր և հետագա հայ պատմավիպասանների համար ուղենիշ ընտրեց Վալտեր Սկոտի և Գեորգ Էբերսի պատմական գրվածքները, որոնք խորապես հիմնված են փաստերի վրա: «Դավիթ Բեկ» վեպը գրելիս Բաֆֆին ընդհատեց շարադրանքը, որպեսզի մեկնի Սյունիք և տեսնի այն վայրերը, որտեղ կատարվել են վեպի գործողությունները: Դրա համար էլ «Մշակում» 1881 թվականի հուլիսի 15-ին տպագրեց «Իմ ընթերցողներին» հոդվածը, որը նս կարող է ուղենիշ լինել պատմական երկ գրողների համար¹¹:

Մ. Շաթիրյանը չէր կարող լինել ո՛չ Գիլիկիայում և ո՛չ էլ Մեծ Հայքի պատմական այն վայրերում, որոնք ճշգրտորեն պատկերված են վեպում: Նա բարեխղճորեն հետազոտել է պատմական ու աշխարհագրական բազմաթիվ հիշատակարաններ, որոնք էլ նրա վեպին հաղորդել են վավերականության սպասված արդյունքը:

«Արծաթե դար» վեպը, վավերական լինելուց բացի, գեղարվեստական պատում է: Նրանում ներկայացվում են տարբեր խավերի կանայք՝ կենդանի ու տեսանելի կերպարներով: Անմոռաց է Սմբատ ասպետի կնոջ՝ Նվարդի կերպարը, որը հիշեցնում է մեր անմահ էպոսի՝ «Սասունցի Դավթի» Սասնա ղյուղագունների հրաշալի կանանց, որոնց կյանքի իմաստը ամուսնուն նվիրված լինելն է: Ու թեև Նվարդը, Սմբատի մահվան լուրն առնելով, հուսահատությունից մեղանչում է նրա հիշատակի առաջ, սակայն, երբ գիտակցում է իր կատարածը, փորձում է ինքնասպան լինել: Սա տիպիկ հայ ըն-տանեսեր և ընտանեկան սրբություններին հավատարիմ կնոջ վարքագծի դրսևորում է: Վեպում կան նաև օտարազգի կանանց կերպարներ՝ իրենց տիպական գծերով ու վարքագծով, որոնցով խիստ տարբերվում են հայուհիներից:

«Արծաթե դար» վեպը պատկերում է այն բարդ պատմական ժամանակահատվածը, երբ Գիլիկիայի տարածքում շարունակական պատերազմների մեջ բախվում էին Արևմուտքի և Արևելքի հզոր երկրների քաղաքական շահերն ու բանակները: Որքա՛ն հանճարեղ պետք էր լինել այդ դաժան խառնարանում սեփական պետականությունը հիմնելու համար:

Մ. Շաթիրյանը բոլոր եկող ժամանակների հայերին բացատրում է, թե հայ ժողովուրդը երբեք իր հույսը չպետք է դնի այլ պետությունների օգնության վրա և սեփական ուժերով, ազգային միացյալ ջանքերով կարող է

¹⁰ «David de Sassoun», Épopée en vers, Paris, 1964, p. 38.

¹¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 10, Ե., 1959, էջ 41-46:

ունենալ իր անկախ պետականությունը: Այդ իմաստուն եզրահանգման հեղինակը Կիլիկիայի անկախ արքա Լևոն Երկրորդն է, որի թագադրման տեսարանով էլ ավարտվում է «Արծաթե դար» վեպը:

Տեղին է համեմատական գուգահեռով ներկայացնել Լևոն Մեծագործի թագադրման իրողությունը պատկերող երկու տարբեր հատվածներ՝ Կլոդ Մութաֆյանի «Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում» գրքից և «Արծաթե դար» վեպից:

ԿԼՈՂ ՄՈՒԹԱՅՅԱՆ

«Տեղեկանալով, որ ոչ Պապը, ոչ էլ գերմանական կայսրը չէին ցանկանա, որպեսզի նա թագադրվեր որպես Բյուզանդիայի վասալ, Լևոնը կրկին նուրբ խաղ է տանում և կարողանում է համոզել ավատատերերին և իր կղերականությանը, որը չէր ենթարկվում հռոմեական ծեսին, և բոլոր հարցերում հաղթանակ է տանում. 1198 թ. հունվարին նա թագադրվում է Տարսոնում և ստանում է Լևոն Առաջին անունը պապական լեգատի և գերմանական ներկայացուցչի կողմից: Բյուզանդիայի կայսրը ինչ-որ չափով իր ազդեցությունը պահպանելու համար ստիպված է լինում նույնպես նրան արքայական թագ ուղարկել: Բաղդադի խալիֆը նվերներ և դեսպաններ է ուղարկում: Կարճ ասած՝ Կիլիկիան ճանաչվում է բոլորի կողմից որպես հայկական թագավորություն: Այն իր գոյությունը կպահպանի մինչև 1375 թ.»¹²:

ՄԻՔԱՅԵԼ ՇԱԹԻՐՅԱՆ

«Դեռ հանդեսից մի քանի օր առաջ Լևոնը Տարսոնի Սուրբ Սուփիա մայր տաճարում Ներսես Լամբրոնացու կողմից հանդիսավորապես թագադրվել էր Բյուզանդական կայսեր ուղարկած թագով, այդպիսով նախապես չեզոքացնելով երկու կայսրերի հետագա նկրտումները իր իշխանության հանդեպ...

Իսկ այդ օրը՝ 1198 թվականի հունվարի 6-ին, Լևոնը արդեն պաշտոնապես պիտի ընդուներ Գերմանիայի կայսեր ուղարկած թագը... Եվ ահա, ըստ Լամբրոնացու մշակած և Լևոնի կողմից հաստատված արարողության կարգի՝ կեսօրին մոտ Կիլիկիո իշխանների, օտարերկրյա հյուրերի և դեսպանների թափորը Լևոնի գլխավորությամբ շարժվեց Տարսոնի պալատից դեպի մայր տաճար, որտեղ նրանց էին սպասում Գրիգոր Ապիրատն ու եպիսկոպոսները»¹³:

Պատմավեպի վերջում Սմբատ ասպետի խելամիտ կերպարով Մ. Շաթիրյանը հավաստում է, թե Հայաստանը կհզորանա, եթե արցախցին, սասունցին, կիլիկեցին և Մեծ Հայքի յուրաքանչյուր հատվածի հայր վերանա իր անձնական խնդիրներից ու ապրի հանուն ազգային պետականության: Հիրավի, որքան արդիական է տաղանդավոր գրողի մարգարեական պատգամն այսօր:

¹² Մութաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001, էջ 157:

¹³ Շաթիրյան Մ., Արծաթե դար, Ե., 1986, էջ 598:

**АКТУАЛЬНОСТЬ ИСТОРИЧЕСКОГО РОМАНА М. ШАТИРЯНА
«СЕРЕБРЯНЫЙ ВЕК»****ДОЛУХАНЫАН А. Г.**

Резюме

Прошло тридцать лет со дня выхода в свет исторического романа «Серебряный век» Микаела Шатиряна, однако книга актуальна по сей день. При написании романа Микаел Шатирян следовал лучшим традициям и мирового, и армянского исторического романа. Сюжетная линия произведения охватывает период, связанный с падением царства Багратидов и доходящий до эпохи основания Киликийского армянского царства. Роман заканчивается пророческими словами, вложенными автором в уста героя романа—Смбата: Армения станет могущественной, если идея национального суверенитета станет доминирующей для каждого армянина.

**THE RELEVANCE OF THE HISTORICAL NOVEL "*THE SILVER AGE*" OF
M. SHATIRYAN****A. DOLUKHANYAN**

Abstract

The historical novel "*The Silver Age*" by Mikael Shatiryan was published exactly thirty years ago, but reading again this wonderful book now, one understands that it is more than important nowadays. Writing the novel "*The Silver Age*", Mikael Shatiryan followed the best traditions of either world or Armenian historical novel. First of all he scientifically studied that period of Armenian history which begins from the collapse of Bagratids Kingdom and ends with the foundation of Armenian Cilician Kingdom by the efforts of Levon the Magnificent. At the end of the historical novel through the clever personage of the Knight Smbat M. Shatiryan shows that Armenia will become powerful if each Armenian of Artsakh, Sasun, Cilicia and every region of Greater Armenia will overcome his own problems and will live for the sake of national sovereignty. Indeed, how important the prophetic instruction of the talented writer nowadays is.